

ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ

Իսկ ան որ Աստուծոյ հանդէպ սիրոյ առաւելութենէն կը կատարէ ընդհանրապէս պահանջուածէն աւելի գերազանց բարի գործեր՝ կատարեալ առաքինի կը կոչուի: Անոր վարձքը շատ է ու ըրիչներուն համեմատ, այնքան որքան բարի գործերով կը գերազանցէ գանոնք: Քանզի «առաքինութիւն» բառը «առաւելութենէն» յառաջացած է, որպէս թէ «ուրիշներէն աւելի բարիք ըրաւ»: Մանաւանդ, որ «առաքինի» բառը կազմուած է «այր» բառէն, որմէ կու գաննաւ «արու» «արի» բառերը, եւ կը ստուգաբանուի որպէս «այրութիւն կամ արիութիւն ունեցող» ուրիշներէն աւելի առաքինի, քաջ, վեհանձն, զօրաւոր: Այդ մտքով, Եղիշէն ըսած է. «Առաքինի այրեր դարձած հոգեւոր պատերազմին մէջ»:

Արդ, օրինապահ կը կոչուին այն անձերը՝ որոնք հրամայուած բոլոր օրէնքները կը պահեն: Անոնք նաեւ կը կոչուին բարեպաշտ կամ բարեգործ՝ որովհետեւ Աստուծոյ կամ Ս. Եկեղեցւոյ սահմանած օրէնքները բարութեամբ կը գործադրեն, արդար՝ որովհետեւ հնազանդ են եւ Տիրոջ հրամանները կատարելը արդարութիւն է, երկիւղած՝ որովհետեւ կը վախնան Աստուծոյ, որ կը բարկանայ իր հրամանները չկատարողներուն վրայ: Ուրեմն՝ որպէսզի մէկը կատարեալ առաքինի ըլլայ, հարկ է այլ մարդոցմէ աւելի շատ բարի գործեր ընէ եւ չարիքներէն հեռանայ:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԳԵԻԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԵՆ

ԽԱՂԱԹՈՒՂԹՈՎ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՀԵՏԵԱՆՔՆԵՐԸ

Հաւատացեալ կնոջ մը վկայութիւնը:

Ձաւակին խնդրանքով կեսուրս երբեմն Աստուածաշունչ կը կարդար, եւ խոստացեր էր այլեւս գուշակութեամբ չգրադիլ, բայց ժամանակ մը յետոյ, ամէն ինչ մոռցած, շարունակեց իր չարագործութիւնը: Իսկ հիմա ամբողջապէս հեռացած է ուղիղ հաւատքէն, եւ հանդիպումներ կ'ունենայ ոգետեսներու հետ: Անգամ մը նոյնիսկ անձնասպանութեան փորձ ըրաւ: Երբեմն մեզի յուզումնալից նամակներ կը գրէ, երբեմն ալ առանց պատճառի, չարութեամբ լեցուն գրութիւններ կը ստանանք: Յատկանշական է, որ գէշ նամակներ կը ստանանք յատկապէս այն ատեն, երբ Աստուած առաւել բարեգութ կը գտնուի մեզի հանդէպ եւ առատապէս կ'օրհնէ մեզ: Կեսուրս թէեւ այդ մասին չի գիտեր, բայց կարծես կը գգայ: Անգամ մը նոյնիսկ անիծեց մեզ եւ մեր գաւակները: Յետոյ խօսքը ետ առաւ: Առանց մեր գիտութեան, ոգետեսներէն խնդրեր է մեր ապագան գուշակել: Հակառակ անոր, որ ամուսինս արգելք էր: Բայց չենք գիտեր թէ հիմա այդ զբաղումին վերջ տուէ՞ր է, թէ ոչ»:

Կը տեսնէ՞ք թէ Սատանան ո՛ւր կը հասցնէ. մայր մը կրնայ անիծել իր գաւակը: Սարսափելի չէ՞:...

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐՈՂԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ՔՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԵՐՈՐԻՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԱՆԵՐՈՐԻՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

ԿԻՐԱԿԻ՝ 2 ՍԵՖՏԵՄԲԵՐ, 2012 ԹԻՒ 36

ՅԻՍՈՒՍ ԳՐԻՍՏՈՒՄ ԱՒԵՏԱՐԱՆԵՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ (6.30-44)

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ Ս. ԽԱԶԻ ՊԱՀՈՑ

Առաքեալները վերադարձան Յիսուսի մօտ եւ անոր պատմեցին ինչ որ կատարեցին եւ ստրվեցուցին:

Յիսուս անոնց ըսաւ. «Եկէ՛ք երթանք ամառի տեղ մը, ուր առանձին կրնանք ըլլալ եւ հոն քիչ մը կը հանգչինք», որովհետեւ ժողովուրդէն շատերուն երթալ-գալուն պատճառով ուտելու իսկ առիթ չէին ունեցած:

Հետեւաբար իրենք առանձինն մաւակ առին եւ գացին ամառի վայր մը:

Երբ ժողովուրդը տեսաւ անոնց երթալը եւ գիտցաւ թէ Յիսուս ալ անոնց հետ է, շրջակայ քաղաքներու բնակիչներէն շատեր ծովեզերքէն վազելով անոնցմէ առաջ հասան անոնց երթալի վայրը: Երբ Յիսուս մաւակէն դուրս ելաւ եւ տեսաւ ամառի, գրաց անոնց, որովհետեւ հովիւ չունեցող ոչխարներու կը նմանէին: Ապա սկսաւ երկարօրէն ուսուցանել անոնց:

Երբ բաւական ժամանակ անցաւ, աշակերտները մօտեցան Յիսուսի եւ ըսին. «Ամառի տեղ եմք, եւ արդէն բաւական ուշ է. արձակէ ժողովուրդը, որպէսզի շրջակայ ագարակներն ու գիւղերը երթան իրենց համար ուտելիք գնելու, որովհետեւ ուտելիք չունին»: Յիսուս անոնց ըսաւ. «Ի՞նչ տուէ՛ք անոնց ուտելիքը»: Անոնք հարցուցին. «Կ'ուզե՞ս որ երթանք եւ երկու հարիւր դահեկան հաց գնենք զանոնք կերակրելու համար»: Յիսուս ըսաւ. «Գացէ՛ք, տեսէ՛ք թէ քանի՞ հաց ունիք»: Աշակերտները ստուգեցին եւ ըսին. «Հինգ հաց եւ երկու ձուկ»: Յիսուս հրամայեց աշակերտներուն որ ժողովուրդը խումբ-խումբ նստեցնեն դալար խոտին վրայ, եւ անոնք հարիւրական եւ յիսունական հոգիներէ բաղկացած խումբերով նստան: Ապա Յիսուս առաւ հինգ հացը եւ երկու ձուկը, երկինքէն նայեցաւ, օրհնեց, կտրեց հացերը եւ տուաւ աշակերտներուն որպէսզի բաշխեն, եւ երկու ձուկերը բաժնեց ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու կշտացան, եւ աւելցած հացի եւ ձուկի կտորները հաւաքելով տասներկու սակառ լեցուցին: Իսկ ուտողներուն թիւը, միայն այր մարդիկը հաշուած, շուրջ հինգ հազար էր:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՆԻԿԻՌՅ Ս. ԺՈՂՈՎՈՅՆ 318 ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ

Եկեղեցական հայրերու գումարած առաջին տիեզերական ժողովի յիշատակը, տօնի ձևով կը կատարուի հայոց եկեղեցւոյ մէջ, ինչպէս միւս երկու տիեզերական ժողովներու յիշատակը (Կ. Պոլիս եւ Եփեսոս):

Նիկիոյ ժողովը գումարուեցաւ 325 թուականին, 318 հայրապետներու մասնակցութեամբ, կոստանդիանոս կայսեր արտօնութեամբ: Ժողովը գումարուելու շարժառիթը Աղեքսանդրիացի երէց Արիոսի հետաքրքրութիւնն էր: Արիոս կը ժխտէր Յիսուսի հաւասարութիւնը Հօր՝ Աստուծոյ հետ եւ չէր ընդուներ Յիսուսի Աստուած ըլլալը: Ըստ Արիոսին Յիսուսը պարզապէս գերմարդկային արարած մըն էր:

Նիկիոյ ժողովին Տրդատ Թագաւորի եւ Գրիգոր Լուսաւորիչի կողմէն կը մասնակցէր Արիստակէս եպիսկոպոսը: Քննուեցաւ Արիոսի մոլար ու հերետիկոսական շարժումը, դատապարտուեցաւ անոր վարդապետութիւնը, հաստատուեցաւ ճշմարիտ դաւանանքը եւ կազմուեցաւ «Հաւատոյ հանգանակ»ը:

Նիկիոյ հանգանակը աւելի ճոխացած ձևով կ'ըսուի եկեղեցւոյ մէջ՝ պատարագի ընթացքին, աւետարանի ընթերցումէն անմիջապէս ետք:

Հաւատամքի բովանդակած կէտերը իւրաքանչիւր քրիստոնեայի համար քրիստոնէական հաւատքի եւ դաւանութեան բանաձևերն են: Հաւատամքը կը բովանդակէ Աստուծոյ, Որդւոյ, Ս. Հոգւոյ, եկեղեցւոյ, Մկրտութեան, մեղքի, մեռելներու յատրութեան, յաւիտենական կեանքի, վերջին դատաստանի, երկինքի թագաւորութեան եւ հոգիներու անմահութեան մասին քրիստոնեաներու ունեցած հաւատքն ու դաւանութիւնը:

Նիկիոյ, ինչպէս նաեւ միւս երկու տիեզերական ժողովներու յիշատակի օրը եկեղեցւոյ մէջ կ'երգուին հայրապետներու նուիրուած շարականներ, ուր անոնց ներբողը հիւսուած է որպէս հաւատքի հիմքերը հաստատողներ:

Ս. ՀՈԳԻՈՎ ՉՕՐԱՆԱԼՈՒ ԱՂՕԹԹ

Գիշեր ու ցերեկ եւ ամէն ժամ կ'աղաչենք քեզի եւ կը խնդրենք, մարդասէր Տէր: Լսէ՛ մեզ, ո՛վ Աստուած, մեր Փրկիչը. աւանջդ մեզի խոնարհեցուր, որպէսզի վեր տեղ չյոգնինք. այլ՝ մեր ճիգը արդարութեան գործ եւ աստուածապաշտութեան պտուղ նկատէ՛: Ընդունէ՛ մեր աղօթքն ու երկրպագութիւնը, ո՛վ Տէր, եւ քու ողորմութեամբդ հատուցանէ՛ մեզի, առատապէս: Քու ամենապօր աջիդ հովանիին տակ ծածկէ՛ մեզ, եւ Սուրբ հոգիիդ պօրութեամբը պօրացու՛ր մեզ, ո՛վ Տէր: Աչքի բիբի պէս պահէ՛ մեզ եւ քու բարերարութիւնդ ցոյց տուր մեզի, որպէսզի քու սուրբ անունդ գովուի եւ փառաբանուի: Որովհետեւ բոլոր արարածները մշտնջենաւոր փառաբանութեամբ քու փառքդ կը հիւսեն բարձունքներուն մէջ, Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՀԱՅՀՈՅՈՂՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Մեծ եւ անփաւելի մեղք է հայեոյանքը եւ աւելի չար՝ քան Ադամէն միւսն ալ. սօր բոլոր հերձուածները, որոնք ժողովով նգովուած են: Մեծագոյն հերձուածը հայեոյանքն է, որ բոլոր մոռցուած մեղքերն ու չարիքները յիշել կու տայ Աստուծոյ, հրեշտակներուն ու սուրբերուն. կը դողացնէ Աստուծոյ արարածները եւ գարշելի ու գազիր հոտով կը լեցնէ երկիրը:

Հայեոյանքը կը փակեն Աստուծոյ ողորմութեան դուռը, թոյլ չեն տար Արարիչին որ ողորմած աչքով իր արարածները տեսնէ եւ կ'արգիլեն սուրբերուն որ բարեխօս ըլլան աշխարհին համար: Այս ձևով քրիստոնէական անունը եւ քրիստոնէութեան աննախ խորհուրդը կը նախատուի եւ ասոր համար է որ Քրիստոս ըսաւ. «Ան որ Ս. Հոգիին հայեոյէ, պիտի չնետուի անոր ո՛չ այս աշխարհին եւ ո՛չ հանդերձաւի մէջ (Մտք. 12.33):

Քրիստոս այս աշխարհին մէջ ոչ ոքի իշխանութիւն տուած է ներելու հայեոյանքին: Միւս աշխարհին մէջ եւս ոչ ոք կը համարակի բարեխօսել՝ ո՛չ հրեշտակները ո՛չ ալ սուրբերը, այլ աշխարհաստեղծ բերնի անէծքներով դեւերուն հետ գեհեմի անշիջանելի հուրը կ'երթայ: Իսկ այս կեանքին մէջ այնքան ատեն որ կենդանի է, բոլոր սուրբերը կը նգովեն այնպիսին: Աստուածախօս եւ մեծ մարգարէն Մովսէս նգոված է հայեոյանքը՝ իր ամբողջ ունեցածով եւ նիստ ու կաղով: Նոյնը ըրած են բոլոր սուրբերը. արգարեւ, ո՞վ չի նգովեր Աստուծոյ Աթոռին հայեոյանքն ու զայն դողացնողը:

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ

Հաւատացեալին վարձքը

Անկասկած ,որ դժուար է այս դարու մանաւանդ այս երկրին մէջ, հաւատք ունենալ եւ գործել: Սակայն խնդրողին պիտի տրուի (Մտ.7.7):

Եթէ մենք առանց երկմտելու աղօթենք Աստուծոյ եւ խնդրենք, որ մեզ զօրացնէ մեր հաւատքին մէջ, Աստուած պիտի լսէ մեր աղօթքը:

Եւ այս բոլորին փոխարէն, սիրելի հաւատացեալ քոյրեր եւ եղբայրներ, Աստուած առատօրէն պիտի վարձատրէ մեզ:

Նոր կտակարանին մէջ յաճախ Աբրահամի անունը յիշուած է իբր օրինակ զօրաւոր հաւատքի:

Յակոբոս առաքեալի Ընդհանրական նամակին մէջ կը կարդանք. «Աբրահամ Աստուծոյ հաւատաց, ու այն իրեն արդարութիւն սեպուեցաւ եւ ինք Աստուծոյ բարեկամ կոչուեցաւ» (Յակ. Ընդ. Բ. 23): Աբրահամ Աստուծոյ բարեկամ կոչուեցաւ: Արդեօք ասկէ աւելի մեծ վարձատրութիւն կարելի է երեւակայել: Արդեօք կա՞յ մէկը, որ չի փափաքիր Աստուծոյ բարեկամը ըլլալու շնորհքին արժանանալ:

Մենք բոլորս ալ, սիրելի հաւատացեալներ, կրնանք Աստուծոյ բարեկամը ըլլալու շնորհքին արժանանալ եթէ հաւատք ունենանք եւ մեր գործերով զօրացնենք մեր հաւատքը՝ ինչպէս ըրաւ Աբրահամ:

Աղօթենք առ բարձրեալն Աստուած, որ Սուրբ Հոգիով լեցնէ մեզ, որպէսզի զօրանանք մեր հաւատքին մէջ եւ մեր գործերով կենդանի պահենք մեր հաւատքը, որպէսզի կարենանք Աստուծոյ բարեկամը ըլլալու շնորհքին արժանանալ:

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՆ
(10.12-19)**

Երբ որ Տէրը ամբողջացնէ այն ինչ մտադրած էր կատարել Սիոն լեռան վրայ, Երուսաղէմի մէջ, իր բարկութիւնը պիտի թափէ Ասորեստանի մեծամիտ թագաւորին վրայ, որ փառքէն կուրցած՝ հպարտանալով կ'ըսէր.

“Իմ զօրութեամբս, իմ իմաստութեամբս եւ հանճարովս իրագործեցի այս բոլորը-ազգերու սահմանները ջնջեցի, անոնց զինամթերքը աւարեցի, տակնուվրայ ըրի անոնց բազմամարդ քաղաքները:

Ամբողջ աշխարհը ձեռքովս գրաւեցի՝ թռչունի բոյն մը ձեռք անցնելու պէս, եւ մարդիկը գերեվարեցի՝ բոյներու մէջ մնացած հակիթները ժողովելու պէս:

Ոեւէ մէկը ձեռքէս չազատեցաւ, եւ չեղաւ մէկը որ ինծի դէմ ելլէր, բերանը բանար եւ ճիկ մը հանէր”:

Այսպէս կ'ըսէ Տէրը. «Կացինը կրնա՞յ վեր բարձրանալ առանց զինք վերցնող փայրահատին, կամ սղոցը կրնա՞յ սղոցել առանց գայն շարժողին. կամ նոյնպէս, փայտն ու գաւազանը կրնա՞ն զարնել եթէ մարդը զիրենք ձեռք չառնէ»:

Ո՛չ անշուշտ:

Արդ, Երկնաւոր Զօրքերու Տէրը պարծանքիդ դիմաց անարգանք պիտի բերէ քեզի եւ բոցավառ կրակով մոխիրի պիտի վերածէ քու փառքը:

Աստուած, որ Իսրայէլի համար լոյս է, այրող կրակ պիտի ըլլայ Ասորեստանի համար ու գայն պիտի ոչնչացնէ այնպէս՝ ինչպէս բոցավառ կրակը կը սպառէ խոտն ու անտառը:

Շարունակել Աստուածաշունչէն

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԵ
ԿՈՐՆԱԹՅՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԹՅ ՆԱՄԱԿԵՆ
(2.12-3.3)**

Երբ Տրովասսա հասայ, Քրիստոսի Աւետարանը քարոզելու համար, Տէրը իմ առջեւ յաջողութեան դուռը բացաւ: Բայց ես չափազանց մտահոգ էի, որովհետեւ հոն չգտայ Տիտոսը, մեր եղբայրը: Ուստի տրովադցիներէն հրաժեշտ ոռնելով Մակեդոնիա անցայ:

Արդ, գոհութիւն Աստուծոյ որ Յիսուս Քրիստոսի յաղթական երթին մասնակից կը դարձնէ մեզ, եւ մեր միջոցաւ իր գիտութեան բոյրը կը տարածէ ամենուրեք: Փրկւլուողներուն մէջ ապրինք թէ կորսուողներուն, մեր կեանքերը Քրիստոցի ձեռքով Աստուծոյ ընծայուած անուշահոտ խոնկի պէս իրենց բոյրը կը տարածեն: Կորսուողներուն համար մահաբոյր կը թուի մեր կեանքը, մինչ փրկուողներուն համար՝ կեանքի բուրմունք: Բայց ասիկա ճշմարիտ է ո՛չ թէ անոնց համար որոնք Աստուծոյ խօսքը վաճառքի կը հանեն, այլ մեզի համար, որ անկեղծօրէն կը խօսինք Աստուծոյ առջեւ, որպէս Քրիստոսի միացած Աստուծոյ պատգամաւորները:

Բայց ասիկա ըսելով, արդեօք ուրիշներուն պէս մենք մեզ գովաբանա՞ծ կ'ըլլանք: Պէտք ունի՞նք միթէ ձեզմէ յանձնարարական առնելու կամ այդպիսի նամակներով ձեզի ներկայանալու, ինչպէս ումանք կ'ընեն:

**ՇԱՐՈՒՆԱԿԵԼ
ԸՆԹԵՐՑՄՆՈՒԹԻՒՆԸ
ՍՍՏՈՒԹՅԱՇԱՐՄԱՆԸ:**